



ԿԱՐՈՐԴԻ ԸՆԿԵՐ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Արցախի 30, 3-րդ հարկ, 0041 Երևան
Հեռ.՝ 098 102178

ՀՀ ԿԱ Ոստիկանության ճանապարհային
Ոստիկանության ծառայության պետ
Պրն. Ե. Կարապետյանին
ՀՀ ք.Երևանի քաղաքապետ
Պրն. Տ. Մարգարյանին

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոններ,

Մենք մշտապես առաջարկներով ենք հանդես գալիս, որը քաղաքի և ընդհանրապես մեր հայրենիքի փողոցներում երթևեկությունը կդարձնի ավելի անվտանգ և անխափան:

Այս անգամ խոսքը Առինջ գյուղը Աճառյան փողոցին միացող խաչմերուկի մասին է, որտեղ հաճախ են լինում վթարներ՝ ցավոք նաև ողբերգական ավարտով, վթարներից վերջինը, այս անգամ բարեբախտաբար թեթև, եղել է բառացիորեն սույն դիմումը պատրաստելու օրերին (Մի քանի վթարների մասին պատմող տեղեկություններ կարող եք ստանալ հիշյալ հղումներով):

<https://www.youtube.com/watch?v=9psj1au7jFw>

https://www.youtube.com/watch?v=qw_nEeO_7NY

<https://www.youtube.com/watch?v=WJxCNwKclbg>

<http://168.am/2014/10/06/412880.html>

<https://www.youtube.com/watch?v=XdX4rcy3A70>

Շատ վտանգավոր է հատկապես գյուղից դեպի ձախ՝ կենտրոնի ուղղությամբ իջնելը: Դրան նպաստում են տվյալ հատվածում թույլատրելի առավելագույն 70կմ/ժ արագությունը և խաչմերուկի մոտ առևտուր անող ծաղկավաճառներն ու ծառավաճառները, որոնք տեսադաշտ են փակում: Հատկապես սեզոնին ողջ 1-ին երթևեկելի գոտին տնկիներ ու բույսեր են, իսկ 2-րդ գոտում կանգնում են գնորդները:

Տվյալ խաչմերուկում անվտանգ երթևեկությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք, սեղմ ժամկետներում իրականանալի և քիչ ծախսատար, ինդրի լուծման երկու տարբերակ՝

1. *Լուսացույցի տեղադրում*
2. *Երթևեկության կազմակերպում՝ գծանշման և ճանապարհային երթևեկության նշանների տեղադրմամբ*

2-րդ տարբերակի դեպքում առաջարկվում է՝

Ա. Աճառյան փողոցով դեպի վեր՝ Աբովյան-Սևան ուղղությամբ ընթացող, երթևեկության հոսքերը Առինջ գյուղի խաչմերուկի մոտակայքում դարձնել հետևյալ դասավորության՝

1-ին գիծ՝ միայն աջ դեպի Առինջ գյուղի ուղղությամբ - Սա կապահովի Առինջ գյուղից դուրս եկող և դեպի ձախ՝ Աճառյան փողոցով, կենտրոնի ուղղությամբ ընթացող, մեքենաների տեսադաշտի մեծացմանը՝ հետևաբար և անհամեմատ ավելի անվտանգ խաչմերուկ մուտք գործելուն: Ինչպես նաև

կապահովի Առինջ գյուղից դուրս եկող և դեպի աջ՝ Աբովյան-Սևան ուղղությամբ ընթացող մեքենաների անվտանգ ու սահուն մուտքը խաչմերուկ:

2-րդ գիծ՝ միայն ուղիղ

3-րդ գիծ՝ ուղիղ և շրջադարձ

Վերոնշյալ ձևով կատարել համապատասխան գծանշում և տեսանելի վայրում (առաջարկվող վայր կարող է հանդիսանալ տվյալ հատվածում գտնվող գնացքի կամուրջը) ամրացնել <<երթևեկության ուղղությունները գոտիներով>> 5.15.1 համապատասխան նշան:

Բ. Աճառյան փողոցով Աբովյան-Սևանից դեպի կենտրոնի ուղղությամբ ընթացող երթևեկության հոսքերը բաժանել հետևյալ հերթականությամբ՝

1-ին գիծ՝ միայն ուղիղ

2-րդ գիծ՝ միայն ուղիղ

3-րդ գիծ՝ միայն ձախ և անվտանգության կղզյակ - Սա հնարավորություն կտա Առինջ գյուղից դուրս եկող և դեպի ձախ՝ Աճառյան փողոցով կենտրոնի ուղղությամբ ընթացող մեքենաներին ավելի անվտանգ մուտք գործելու խաչմերուկ: Տեսականորեն կբացառվի Սևան-Աբովյանի կողմից եկող մեքենաներից սպասվող հնարավոր հարվածը՝ ինչն էլ հանդիսանում է մինչ այժմ եղող վթարների հիմնական պատճառը: Տվյալ հոսքագծում հնարավոր է նաև շրջադարձի արգելումը, քանի որ խաչմերուկից մի քանի հարյուր մետր ներքև կա շրջադարձի համար նախատեսված հատված:

Անվտանգության կղզյակից՝ օրենքով նախատեսված հեռավորությամբ, տեսանելի վայրում տեղադրել երթևեկությունը երրորդ գոտիով միայն ձախ և այլ անհրաժեշտ նշաններ ու գծանշումներ: Քանի որ այս հատվածում էլ կա տեսադաշտի խնդիր (գյուղից դուրս եկողը գտնվում է ավելի ցածրադիր դիրքում), առաջարկում ենք Երևան-Սևան և Սևան-Երևան ուղղությունը բաժանող և փաստացի որպես հոծ գիծ հանդիսացող ծառուղուց որոշակի հատված մաքրել ծառերից կամ փոխարինել ավելի ցածր՝ տեսանելիությունը չխոչընդոտող թփերով կամ ծաղիկներով:

Գ. Թբիլիսյան խճուղուց իջնող և տվյալ խաչմերուկում Աճառյան փողոցին միացող հատվածում բաժանարար հոծ գիծն ավելի երկարացվի՝ մինչև կամուրջ: Ավելի տեսանելի լինելու համար կատարել 1.16.2 <<ուղորդող կղզյակ>> գծանշում, առկա <<երթևեկությունն ուղիղ>> 4.1.1 նշանից բացի ավելացնել նաև <<ձախ շրջադարձն արգելող>> 3.18.2 նշանը: Ասֆալտին կատարել <<միայն ուղիղ>> գծանշում:

Դ. Սույն խաչմերուկում երկկողմանի ուղղությամբ թույլատրելի 70 արագությունը սահմանափակվի 50, կամ անհրաժեշտության դեպքում, ավելի պակաս թույլատրելի արագությամբ : Ասֆալտին կատարվի համապատասխան <<առավելագույն արագության սահմանափակումը կրկնօրինակող>> 1.24.2 նշան և տեսանելի վայրում տեղադրվի համապատասխան <<առավելագույն արագության սահմանափակման>> 3.24 նշան:

Անհրաժեշտության դեպքում տեղադրվի արագության սահմանափակման համար նախատեսված արգելքներ:

Ե. Առինջ գյուղից դուրս եկող հատվածում առկա <<զիջեք ճանապարհը>> 2.4 նշանից բացի տեղադրվի << Երթևեկությունը դեպի աջ կամ դեպի ձախ >> 4.1.6 նշանը և դրանց կրկնօրինակող գծանշաններ: Անհրաժեշտության դեպքում տեղադրվի նաև <<երթևեկությունն առանց կանգառի արգելվում է>> 2.5 նշան:

2. Խաչմերուկում՝ Երևան-Սևան և հակառակ ուղղությամբ երթևեկողների համար տեսանելի վայրում տեղադրվի թարթող դեղին լուսացույց և <<հատում երկրորդական ճանապարհի հետ>> 2.3.1 նշան:

Է. Խաչմերուկը և մերձակա տարածքը ազատվի վաճառականներից, նրանց հետագայում այդտեղ չհայտնվելու համար սահմանվի մշտական հսկողություն:

Սույն դիմումին կցվում են այս ամենը նկարագրող, մեր կողմից պատրաստված, գծապատկեր նկար և տեղանքի քարտեզներ՝ ըստ <<Գուգլ քարտեզի>>-ի:



Ակնկալում ենք ձեր, հնարավորինս սեղմ ժամկետներում, օգնությունն ու աջակցությունը՝ մեր քաղաքացիների անվտանգ երթևեկության կազմակերպման կարևոր գործում:

Սույն օրինակը ուղարկվում է ՀՀ Վարչապետ Կարեն Կարապետյանի տրանսպորտի, կապի և ՏՏ-ի գծով խորհրդական Էդուարդ Ներսիսյանին:

Դիմող՝

«ՎԱՐՈՐԴԻ ԸՆԿԵՐ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐՆ. ՏԻԳՐԱՆ ԶԵՅԱՆ


ստորագրություն

«10» Տեպտեմբեր 2016թ.